ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«28» հունիս 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

Մ. Անանյան

ԳԲԽ-67/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի 13.06.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը (այսուհետ նաև՝ Մասնակից) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 13.06.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Մասնակիցը հայտ է ներկայացրել «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝

Ընթացակարգ) և 15-րդ, 17-րդ, 29-րդ, 49-րդ և 53-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

Այնուհետև Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից պահանջվել են որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթեր, որոնք Մասնակցի կողմից ներկայացվել են:

Մասնավորապես, Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը ներկայացրել է նախկինում կատարված համանման համարվող պայմանագիր, հանձնման-ընդունման ակտեր, որոնք, ըստ Մասնակցի, համապատասխանում են ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 81-րդ կետի 1-ին ենթակետի պահանջներին, հաստատված տեխնիկական բնութագրեր, 5-րդ հավելված:

Սակայն, ըստ Մասնակցի, Պատվիրատուն շրջանցել է Կարգի վերոհիշյալ դրույթները և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.05.2016թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ համարել է, որ ներկայացված նմանատիպ պայմանագրում նշված ամբողջ գումարի չափով պետք է ներկայացված լիներ հանձնման-ընդունման ակտերի հանրագումարը և Մասնակցի հայտը մերժել է:

Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը 13.06.2016թ. բողոքով Խորհրդին խնդրել է՝ հիմք ընդունելով Կարգի 81-րդ կետի 1-ին ենթակետը և այն փաստը, որ Մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերը ժամանակին և ճիշտ են ներկայացվել, կասեցնել Ընթացակարգի արդյունքներով պայմանագրի կնքումը և դադարեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.05.2016թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ կայացված որոշումը:

ԳԲԽ-67/16 բողոքը քննող հանձնաժողովի 20.06.2016թ. որոշմամբ Մասնակցի կողմից բողոքով ներկայացված Ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու գործընթացը կասեցնելու մասին ժամանակավոր միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը բավարարվել է:

Մասնակցի ներկայացուցիչները, մասնակցելով ԳԲԽ-67/16 բողոքը քննող հանձնաժողովի 17.06.2016թ. ժամը 16:00-ին կայացած նիստին, պնդել են բողոքը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը

Երևանի քաղաքապետարանը Կենտրոնին ուղղված 15.06.2016թ. թիվ 02/61-12371 գրությամբ ներկայացրել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն միաժամանակ վերոհիշյալ գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.05.2016 թվականի թիվ 4 որոշմամբ 15-րդ, 17-րդ, 29-րդ, 49-րդ, 53-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթով, առաջարկել է Մասնակցին սահմանված ժամկետներում ներկայացնել պահանջվող փաստաթղթերը: Վերջինս 18.05.2016 թվականին գնման ընթացակարգի համակարգողի (այսուհետ՝ Համակարգող) էլ. փոստին ներկայացրել է պահանջվող փաստաթղթերի մի մասը, որոնք սկանավորված են եղել ոչ ընթեռնելի տարբերակով: Համակարգողը նույն օրը Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին տեղեկացրել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել վերոհիշյալ փաստաթղթերի պատճենները ընթեռնելի տարբերակով:

Մասնակցի կողմից 19.05.2016 թվականին ներկայացված փաստաթղթերը ոչ ամբողջական և անընթեռնելի են եղել, ինչպես նաև հանձնման-ընդունման արձանագրությունների հանրագումարը պակաս է եղել ներկայացված պայմանագրով սահմանված գումարից: Վերոգրյալով պայմանավորված գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 51-րդ կետի դրույթներով, 19.05.2016 թվականի թիվ 5 որոշմամբ ոչ ավտոմատ տարբերակով ծանուցել է Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին՝ առաջարկելով շտկել որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները, որից հետո Մասնակցի կողմից 20.05.2016թ-ին ժամը 21:45-ին էլ.

փոստի միջոցով համակարգողին ուղարկվել է հանձնման–ընդունման արձանագրություններ, որոնք, սակայն կրկին անընթեռնելի էին և նշված գումարները (հանրագումարը) պակաս էին ներկայացված պայմանագրով սահմանված գումարից:

Ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.05.2016 թվականի թիվ 6 որոշմամբ մերժել է Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի հայտը և դադարեցրել հետագա մասնակցությունը գնման գործընթացին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետով և Կարգի 122-րդ կետի դրույթներով, Երևանի քաղաքապետի 26.05.2016 թվականին N 01/61-10423 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարին է տրամադրվել համապատասխան փաստաթղթերի պատճենները՝ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի նկատմամբ համապատասխան գործընթաց նախաձեռնելու՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

Պատվիրատուի ներկայացուցիչը, մասնակցելով ԳԲԽ-67/16 բողոքը քննող հանձնաժողովի 17.06.2016թ. ժամը 16:00-ին կայացած նիստին, առարկել է բողոքի դեմ:

3. ԳԲԽ-67/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-67/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով 05.05.2016թ. հայտ է ներկայացրել:

3. Ընթացակարգի հրավերով պահանջվել է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

4. Ա/Ձ-ն հայտի N 3.1 հավելվածով՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ ***շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է Երևանի քաղաքապետարանի հետ կնքած «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/38-4» պայմանագիրը, որի ընդհանուր արժեքը կազմել է 225,257,932 ՀՀ դրամ և պարտավորվում է հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:***

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 12.05.2016 թվականի թիվ 4 որոշմամբ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը ճանաչվել է Ընթացակարգի 15–րդ, 17-րդ, 29-րդ, 49-րդ, 53-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

6. Մասնակցի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/38-4» պայմանագրի պատճենը և հանձնման-ընդունման արձանագրություններ, որոնց ընդհանուր գումարը պակաս էր նշված պայմանագրով սահմանված գնից (225 257 937 ՀՀ դրամ):

7. Մասնակիցը 18.05.2016 Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է իր կողմից ներկայացված հայտի թիվ 3. 1 հավելվածով ներկայացված «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորող փաստաթղթերը, որոնք Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են թերի և ոչ ընթեռնելի, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Ա/Ձ Էդուարդ Առուստամյանին տեղեկացրել է, որպեսզի վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնի վերոհիշյալ փաստաթղթերի պատճենները ընթեռնելի տարբերակով:

8. Մասնակցի կողմից 19.05.2016 թվականին ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր, որոնք Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են ոչ ամբողջական և անընթեռնելի, ինչպես նաև հանձնման–ընդունման արձանագրությունների հանրագումարը պակաս է եղել ներկայացված պայմանագրով սահմանված գումարից:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և առաջարկել Մասնակցին շտկել անհամապատասխանությունները:

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 23.05.2016 թվականի ժամը 17:00-ի թիվ 6 արձանագրության 5-րդ կետով կայացված որոշմամբ մերժել է Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի հայտը և դադարեցրել հետագա մասնակցությունը գնման գործընթացին՝ պատճառաբանելով, որ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի կողմից 20.05.2016թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացված հանձնման–ընդունման արձանագրություններում նշված գումարները (հանրագումարը) պակաս են ներկայացված պայմանագրով սահմանված գումարից:

4. ԳԲԽ-67/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի կողմից 13.06.2016թ. ներկայացրած բողոքը, Երևանի քաղաքապետարանի 15.06.2016թ. թիվ 02/61-12371 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածը սահմանում է, որ՝

1. Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

2. Պարտավորությունները ծագում են պայմանագրից, վնաս պատճառելու հետևանքով և սույն օրենսգրքում նշված այլ հիմքերից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝*** պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, իսկ նման պայմանների ու պահանջների բացակայության դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներին կամ սովորաբար ներկայացվող այլ պահանջներին համապատասխան:

Նույն օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ ***պատշաճ կատարումը դադարեցնում է պարտավորությունը:*** Պարտատերը, ընդունելով կատարումը, պարտավոր է պարտապանի պահանջով նրան ստացական տալ՝ կատարումը լրիվ կամ համապատասխան մասով ստանալու մասին:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 65-րդ կետի 1-ին, 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների, օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

3) ***առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.***

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝

առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին.

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպես Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/98» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել:

Մասնակիցը հայտի թիվ 3.1 հավելվածով հայտնել և հավաստել է, որ որ ***շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է Երևանի քաղաքապետարանի հետ կնքած «ԵՔ-***

ՇՀԱՊՁԲ-15/38-4» պայմանագիրը, որի ընդհանուր արժեքը կազմել է 225,257,932 ՀՀ դրամ և պարտավորվում է հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Մասնակցի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի և Երևանի քաղաքապետարանի միջև 12.01.2015թ. կնքված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/38-4» ծածկագրով սննդամթերքի գնման պայմանագիրը (այսուհետ նաև՝ Պայմանագիր), որի 1.1. կետը սահմանում է հետևյալը. «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով, որի եռամսյակային համամասնությունները և վերջնաժամկետը, որը կլինի ոչ ուշ քան 2015 թվականի դեկտեմբերի 25-ը, կսահմանվեն լրացուցիչ համաձայնագրով Գնորդին կամ նրա կողմից որոշված ստացողին մատակարարել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված սննդամթերքի ձեռքբերում, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում վճարել դրա համար»:

Պայմանագրի 6.1-րդ կետը սահմանում է, որ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ:

Նույն պայմանագրի 9.2-րդ կետի համաձայն՝ պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրի 9.11-րդ կետը սահմանում է, որ նույն պայմանագրով նախատեսված Գնորդի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի Աջափնյակ, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նուբարաշեն, Նորք-Մարաշ, Շենգավիթ, Ավան, Նոր Նորք, Քանաքեռ-Զեյթուն շրջանների ղեկավարների աշխատակազմները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ենթակայությամբ գործող Հ. 141 և Հ. 154 մանկապարտեզները:

Մասնակցի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին, որպես Կարգի 65-րդ կետի 3-րդ կետով նախատեսված պայմանագրի սահմանված ժամկետում

կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճեն, ներկայացվել են Պայմանագրի շրջանակներում կազմված և ստորագրված ապրանքի հանձնման-ընդունման արձանագրություններ, որոնց ընդհանուր գումարը սակայն պակաս է Պայմանագրում նշված գումարից:

Միևնույն ժամանակ Մասնակցի կողմից Պատվիրատուին չի ներկայացվել Պայմանագիրը սահմանված ժամկետում պատշաճ կատարելու վերաբերյալ կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, ինչը հնարավորություն կտար Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին գնահատելու Պայմանագրի պատշաճ կատարման փաստը:

Այսպիսով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 424-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին պարբերության համաձայն՝ ***պատշաճ կատարումը դադարեցնում է պարտավորությունը:***

Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետը նախատեսում է, «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման հետևյալ հիմնական պայմանները.

1. Մասնակիցը պետք է ներկայացնի համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր.

2. Պայմանագիրը պետք է լինի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում ***պատշաճ ձևով կատարված,*** որը ենթադրում է, որ պայմանագրի կողմերը արդեն իսկ լրիվ ծավալով կատարել են պայմանագրային պարտավորությունները և պայմանագիրը սահմանված կարգով դադարել է:

3. Պայմանագրի պատշաճ կատարումը գնահատելու համար մասնակցի կողմից ներկայացվում է տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ ***պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:***

Ա/Ձ Էդուարդ Առուստամյանը որպես որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթուղթ ներկայացրել է Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի և Երևանի քաղաքապետարանի միջև 12.01.2015թ. կնքված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/38-4» ծածկագրով

սննդամթերքի գնման պայմանագրի պատճենը, որի գինը կազմել է 225,257,932 ՀՀ դրամ:

Մասնակիցը ներկայացրել է սահմանված կարգով ստորագրված հանձնման-ընդունման ակտեր, ***որոնց գնի հանրագումարը սակայն էականորեն պակաս է Պայմանագրում նշված գնից:***

Հաշվի առնելով, որ Կարգը հնարավորություն է տալիս, որպես պայմանագրի պատշաճ կատարումն հավաստող փաստաթուղթ ներկայացնել կամ հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, Մասնակցի կողմից հավաստող ակտի պատճենը չներկայացվելու պայմաններում չի ներկայացվել նաև տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, որը հնարավորություն կընձեռներ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին իրականացնել Պայմանագրի պատշաճ կատարման փաստի գնահատումը և որոշելու Մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի՝ հրավերի պահանջներին համապատասխանելու հանգամանքը:

Կենտրոնը արձանագրում է, որ Մասնակցի կողմից Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացված հանձնման-ընդունման արձանագրությունները թույլ չեն տալիս գնահատելու Մասնակցի կողմից որպես «Մասնագիտական փորձառություն» չափանիշը հիմնավորելու համար ներկայացված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/38-4» գնման պայմանագրի պատշաճ կատարման փաստը, քանի որ դրանց ընդհանուր գումարը պակաս է պայմանագրի գնից:

Ընդ որում անհրաժեշտ է նշել, նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը առաջնորդվելով Կարգի 51-րդ կետի պահանջներով՝ առաջարկել է Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը, որը սակայն Մասնակցի կողմից չի շտկվել:

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և

փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չեն համապատասխանում Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներին և Մասնակցի կողմից չի ներկայացվել «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-15/38-4» ծածկագրով պայմանագիրը պատշաճ կատարումն հավաստող որևէ փաստաթուղթ, գտնում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, մերժելով Մասնակցի հայտը, գործել է իրավաչափ:

Հետևաբար, Կենտրոնը գտնում է, որ Ա/Ձ Էդուարդ Առուստամյանի կողմից ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 13.06.2016թ. ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման, ուստի առաջարկում ենք Մասնակցի բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի Պետի տեղակալ՝	Հ. Այունց
Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝	Հ. Ենգոյան
Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝	Մ. Կատվալյան
Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-67/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝	Ա. Ծատուրյան